## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՆԴՅԱՆ 75-ԱՄՅԱԿԻՆ

Դու մեր մեծ երթի գավազանակիր...
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Քո լուսաբաշխ մտքի նվիրումով անկեղ,
Հայրենական սերմի մի բուռ ցորյան ոսկի
Սերմանեցիր դեպի մեր պատերը հրկեզ,
Ի տես հայոց գալիք բոլոր սերունդների:

Դեպի երկինք տարար Ավարայրի ոգին,
Որպես խորհուրդ անբիծ, տեսիլք հավերժության,
Հավատավոր հոգով՝ որպես աղոթք խորին,
Փոքրիկ հոտի համար դարձած երգ փրկության:

Առաջնորդի՛ր, Հայրի՛կ, փոքրիկ հոտդ թախծոտ,
Հեռո՛ւ պահիր նրան տագնապներից վշտոտ,
Որ էլ երբեք կյանքում նա չտեսնի խավար,
Ու միշտ մնա հեռու ճամփաներից արնոտ:

Լցված ոգով բարի հայրենական հողի,
Քո շինարար Ձեռքի խաղաղ գործով արդար,
Աղոթարար Հոգուդ նվիրումով բարի
Առաջնորդի՛ր հոտդ դեպ ապագան պայծառ:

ԱՍՈՂԻԿ ԱԲԵՂԱ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ

Ս Էջմիածին